ռանցն եւ արեան ճապաղիս[1] հանէին: *24* Որոց նախ եւ առաջին յառաջատեսութեանն սրբոյն, ի գառնութենէ[2] ի գայլութիւն փոփոխման՝ այն այր ի տոհմէն Սիւնեաց եղեւ պատճառ կորստեան բազմաց եւ կոտորածի աշխարհիս Հայոց:

ԻԱ. Եւ լուեալ զայս ամենայն բանս՝ անաւրինին Միհրներսեհի եւ խնդալից եղեալ, քանզի եգիտ սատար մահաթոյն եւ գրգռիչ անաւրէն իւրում մտածութեանն զայրն զդիւազգեաց զՎարազվաղան, մտեալ խնդալից առ թագաւորն Յազկերտ՝ սկսաւ խաւսել ընդ նմա առանձինն եւ ասէ. «Ոչ միայն զվայելչութենէ[3] շահից, եթէ ո՛րպէս ի դէպ է տերանց աւգտել ի ծառայից, զայն եւեթ հոգալ պարտ է տերանց, այլ եւ յաղագս գիւտի ոգւոց արժան է զմտաւ ածել, որով ոգիք ծառայից մի՛ կորիցեն: *2* Վասն զի որպէս դու վասն քո շահիցն եւ հարկաց փոյթ յանձին ունիս զի աւգտեսցիս՝ նոյնպէս եւ աստուածք զոգւոցն գիւտս[4] ջերմագոյն եւս գրեն[5] եւ կամին տեսանել: *3* Եւ աստուածոցն արժանի առնել՝ չկարէ ոք ասել զպարգեւս եւ զպատիւս, որ անպիսւոյն յաստուածոցն մթերեալ պահին. թող թէ որ ոք բազում ոգիս հնարի ի մոլորութենէ ի ճանապարհ ածել եւ զանէծս անցուցանել ընդ արդարս. փառք եւ շքեղութիւնք որ այնպիսեացն ոգւոցն ընձեռին յաստուածոցն[6]՝ ոչ ոք կարէ բանիւ ասել զայն եւ պատմել եւ կամ ընդ գրով բովանդակել: *4* Արդ՝ քանի՞ աշխարհք են[7], որում դուք իշխէք աստուածաբար, եւ զոր սպանանել կամիք իշխէք[8] եւ զորս կեցուցանել: *5* Եւ նախ առաջին՝ որպէս Հայոց մեծ աշխարհն պիտոյ է եւ աւգտակար, եւ առ նմին Վրաց եւ Աղուանիցն. եւ միայն աւգտիցն եւեթ հայիք, զոր ընդունիք յաշխարհացն. եւ որ մեծն է եւ կարեւոր՝ յաղագս այնչափ կորուսեալ ոգւոց գիւտի[9]՝ զայն բնաւ եւ զմտաւ իսկ չածէք եւ ոչ հոգայք. եւ զայս ոչ գիտէք, եթէ ընդ ամենայնի այնչափ անձինն[10] համար տալոց էք աստուածոցն: *6* Զի եթէ հոգայք ընդ այնչափ ոգւոյ փրկութեան՝ գիտացէ՛ք, զի աւելի քան զաստի թագաւորութեանդ մեծութիւնդ զոր ունիք, ոգւոցն բարի եւ մեծութիւն որ լինէր անդ՝ շատ աւգուտ էր ձեզ եւ պիտոյ: *7* Ես առաւել[11] այլ աւգուտս մեծամեծս եւ կարեւոր

1 *Զ.* ճապախիս
2 *Զ.* եւ ի գառնութենէ
3 *ՏՏ.* ի վայելչութենէ
4 *Ամ.* գիւտք
5 *Թերեւս*՝ եւս խնդրեն
6 *Ամ.* յաստուծոցն
7 *ՁԱմ.* աշխարհ են
8 *ՏՏ.* կամիք յիշէք
9 *ՁԱմ.* գիւտի ոգւոց
10 *ՁԱմ.* անձինս
11 *ՁԱմ.* եւս առաւել